ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2012թ. N ----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՄՍՈՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի 2794-րդ տարեդարձի առթիվ, ազգային մշակույթի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, ինչպես նաև թատերարվեստի բնագավառում ունեցած մեծ վաստակի և ակնառու ձեռքբերումների համար Երևանի Կ. Ս. Ստանիսլավսկու անվան պետական ռուսական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ալեքսանդր Սամսոնի Գրիգորյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՄՍՈՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ալեքսանդր Սամսոնի Գրիգորյանը ծնվել է 1936 թվականին, 26 տարեկանում դարձել է Սմոլենսկի թատրոնի գլխավոր ռեժիսոր, իսկ 28-ում՝ հրավիրվել է Կ. Ստանիսլավսկու անվան Երևանի ռուսական դրամատիկական թատրոն՝ որպես գլխավոր ռեժիսոր:

Նրա անվան հետ է կապված Երևանի ռուսական դրամատիկական թատրոնի բեմում լավագույն ներկայացումների՝ Մ. Լերմոնտովի «Դիմակահանդես», Ն. Գոգոլի «Ռևիզոր», Սուխովո-Կաբիլինի «Տարելկինի մահը», Շեքսպիրի «Մակբեթ» և այլ բեմադրությունները, որոնք մեծ համբավ են բերել թատրոնին: Ն. Անկիլովի «Ջինվորի այրին» ներկայացման համար Ա. Գրիգորյանն արժանացել է Հայաստանի պետական պարգևի: Ներկայացումներից շատերը, որոնք բեմադրվել են ոչ միայն Երևանում, այլև Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Յարոսլավլի, Վոլգոգրադի, Կալինինգրադի, Օդեսայի, Լվովի, Քիշնևի, ինչպես նաև Բուլղարիայի, Ռումինիայի, Հարավսլավիայի, Սլովակիայի, Հունգարիայի և Լեհաստանի բեմերում՝ արժանացել են բարձր մրցանակների և պարգևների:

2004 թ. Մոսկվայի Չեխովի անվան գեղարվեստի թատրոնում Ա. Գրիգորյանը բեմադրել է Ռ.Կալինովսկու «Լուսնային հրեշ» ներկայացումը, որն ընդգրկվել է թատրոնի հիմնական խաղացանկում և ներկայացվում է մինչ օրս:

Ա. Գրիգորյանի շնորհիվ թատրոնում շուրջ 25 տարի գործում է դերասանի ստուդիան, որի ուսանողները համալրում են ոչ միայն երևանյան՝ այլև մոսկովյան թատերական բեմերը: Նրա նախաձեռնությամբ Երևանի թատերական ինստիտուտում բացվել է դերասանի վարպետության ռուսալեզու լսարան: 2005 թվականին Ալ. Գրիգորյանի բեմադրած «Հոգեհանգստի աղոթք» և «Կտրտված շղթա» ներկայացումները մեծ հաջողությամբ ցուցադրվել են Մոսկվայում, Կալուգայում, Վլադիմիրում և Տուլայում:

2007 թվականին Ա. Ս. Գրիգորյանը ՌԴ նախագահ Վ. Պուտինի հրամանագրով պարգևատրվել է Բարեկամության պատվո շքանշանով:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՄՍՈՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ալեքսանդր Սամսոնի Գրիգորյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՄՍՈՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ալեքսանդր Սամսոնի Գրիգորյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ